(արհեստաւորներ), Տանձոտում եւ Ենի-բաբաթում հայեր-գիւղացի հողագործներ, որոնք մնացել էին որպէս փշրանք հին ճոխութիւնից։

Շաւշէտ վտակն սկսւում է Դարաչվրելի եւ Արսեան լեռներից եւ համանուն լճակից, անցնում է Դարաչվրելի աւանից-Մասուրաթ անունով, ուր ձախից միանում է Վ. եւ Ս. Սուլիզ, Բալվանա, Շաւկետ[1], Սախմար օղլի, Տաւգետ առուակները համանուն գեղերից, որոնք բղխում են Եալանուզ-չամ լ-ից, աջից խառնւում է Շաւշէտի վտակին Սխլորանի առուակը համանուն գեղից, որ իջնում է Շաւլ լ-նից, ոռոգում է Ցեխիա, Մերիա, Պերանատ, Սախմոր եւ Կոբիդար գեղերը. Ախաշէն, Սախրա եւ Սպիր-օղլի կշլակները։ Չորս կիլոմետր ցածից ընդունում է նոյնպէս աջից Տրետի[2] առ-ը, որ իջնում է Կվարէկարի լ-ից ոռոգելով Ցիտվէտ, Կորովատ, Դարակիքիլ, Մուխտատ, Մորգէլ, Սարուդարա գեղերը, ընդունելով աջից Ցիխիձիրի առուակը համանուն գեղերից՝ խառնւում է Շաւշէտին եւ Ախալդարա առ-ը ոռոգելով համանուն

---

1 Բուն Շաւշէտը պիտի լինի այս Շաւկետը, որը աւերակ է եւ ամրոցը կործանած։

2 Ցրեան ունի բերդ, նախապատմական աւերակներ։ Այսաեղ է հին Բարա գեղը, որ 1828 թ. Քոռ Հիւսէինը ցրուեց։ Բարացիները յայտնի են Արդանուշ, Արդվին, Կարս եւ Ախբքալակ որպէս հալածուածներ խամշօղլի-Քոռ-Հիւսէին բէկից։ Քարայի աւերակները Սեննարի Բարբան են յիշեցնում։